

## 7-րդ դասարան, II փուլ

### Տարբերակ 1

1) Հաշվեք  $\left|1,6 : 2,5 - 3\frac{1}{5} \cdot \frac{1}{3}\right| \cdot 4\frac{13}{16}$  արտահայտության արժեքը:

2)  $A, B, C$  թվերից մեկը դրական է, մեկը բացասական, մեկը 0: Հայտնի է, որ  $A = B \cdot (B - C)$ :  
 $A, B, C$  թվերից ո՞րն է դրական, ո՞րը բացասական, ո՞րը հավասար 0: Պատասխանը հիմնավորել:

3) Երեք ծովահեն որոշեցին բաժանել մետաղադրամներով լի արկղը: Առաջին ծովահենը վերցրեց մետաղադրամների երեք յոթերորդը, երկրորդը՝ մնացածի 51%-ը: Պարզվեց, որ երրորդ ծովահենը ստացավ 8 մետաղադրամ պակաս, քան երկրորդը: Քանի՞ մետաղադրամ կար արկղում:

4) Ավագանը ունի երեք ծորակ՝ 1-ինը և 2-րդը լցնող, իսկ 3-րդը դատարկող: 1-ին և 3-րդ ծորակները միասին դատարկ ավագանը լցնում են 6 ժամում, իսկ 2-րդ և 3-րդ ծորակները միասին դատարկ ավագանը լցնում են 12 ժամում: Քանի՞ ժամում կլցնեն դատարկ ավագանը երեք ծորակները միասին, եթե 3-րդ ծորակը աշխատի երկու անգամ ավելի մեծ արտադրողականությամբ:

5) Չորս սկյուռիկներ կերան 2016 կաղին, յուրաքանչյուրը ամենաքիչը 102 հատ: Հայտնի է, որ առաջին սկյուռիկը կերել է ամենաշատ կաղին, իսկ երկրորդը և երրորդը միասին կերել են 1275 կաղին: Քանի՞ կաղին է կերել առաջին սկյուռիկը:

6) Գտեք 1, 2, 3, 4 թվանշաններով գրվող այն քառանիշ թվերի քանակը, որոնց թվանշանները տարբեր են և, որոնց գրառման մեջ 1-ը գտնվում է 2-ից աջ:

7) Շարքում կանգնած է 10 երեխա: Հայտնի է, որ բոլոր աղջիկները միասին ունեն այնքան կոնֆետ, որքան բոլոր տղաները միասին: Երբ շարքում կանգնած յուրաքանչյուր երեխա իրենից աջ գտնվող բոլոր երեխաներին տվեց մեկական կոնֆետ, պարզվեց, որ բոլոր աղջիկների կոնֆետների քանակը ավելացավ 25-ով: Գտեք շարքում կանգնած աղջիկների քանակը: Պատասխանը հիմնավորել:

8)  $A$  բնական թվի իրարից տարբեր երեք փոքրագույն բաժանարարների գումարը հավասար է 8: Քանի՞ գրոյով կարող է վերջանալ  $A$  թիվը: